Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ավագանու
2023 թվականի հունիսի 6-ի
թիվ 18-Ա որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի (այսուհետ՝ Համայնք) վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հեղուկ վառելիքի վաճառքի, սեղմված բնական գազի վաճառքի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի, խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու, ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման, առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու, հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման, քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման, մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվությունների (այսուհետ՝ թույլտվություն) տրամադրման կարգի հետ կապված հարաբերությունները:
2. Թույլտվությունը տրամադրվում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին (ֆիզիկական անձանց) (այսուհետ՝ դիմումատու) Համայնքի ղեկավարի կողմից՝ սույն կարգի N 1 ձևին համապատասխան:
3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Համայնքի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային կամ թղթային եղանակով՝ N 2 ձևին համապատասխան դիմում, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը.
3) օրենքով, իրավական ակտերով անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

4. Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվություն ստանալու համար դիմումին կից ներկայացվում է քննարկվող տարածքի լուսանկարը:
5. Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին տրվում է համապատասխան թույլտվություն կամ դիմումը մերժվում է:
6. Դիմումը մերժվում է, եթե՝ սույն կարգի 3-4-րդ կետերով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս) և դրա մասին դիմումատուին տեղեկացնելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից դրանք չեն համալրվել:
7. Դիմումը մերժելու դեպքում տեղական տուրքի վճարված գումարը վերադարձվում է օրենքով սահմանված կարգով:
8. Թույլտվությունը չի կարող դիմումատուի կողմից փոխանցվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կամ օգտագործվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից:
9. Թույլտվությունն ստանալուց հետո թույլտվություն ստացած անձը պարտավոր է իր գործունեությունը կազմակերպել և իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՁԵՎ N 1

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար

Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ____

Տրված ____ _____20 թ.

Թույլատրված գործունեության անվանումը

_____
_____

Դիմումատուի անունը, հայրանունը, ազգանունը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, հարկ վճարողի հաշվառման համարը

_____

_____

Գործունեության տեսակի իրականացման վայրը

_____

Թույլտվության գործողության ժամկետը ____ _____ 20 թ-ից մինչև ____ _____ 20 թ-ը:

_____ _____
(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Կ. Տ.

Ձև N 2

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար
_____ ին
/անուն, ազգանունը/

ԴԻՄՈՒՄ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը և կազմակերպական-իրավական ձևը կամ անհատ ձեռնարկատիրոջ (ֆիզիկական անձի) անունը, հայրանունը, ազգանունը

_____
_____

2. Հեռախոսահամարը, Էլեկտրոնային հասցե, կապի այլ միջոցներ

_____

3. Գործունեության տեսակի իրականացման վայրը

_____

4. Գործունեության անվանումը

_____

5. Թույլտվության ժամկետը

_____

/նշել թույլտվության պահանջվելիք ժամկետը/

6. Այլ նշումներ

_____

_____

Դիմող՝

_____

/կազմակերպության պատասխանատու անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, ստորագրությունը/

_____ 20 թ.

Կ. Տ.